



ԵՐԿՈՒ ԲՆՈՐՈՉ ԳԻՃ՝ ՄԱԿԱՐ ԿԱԹՈՒՂՈՍԿՈՍԻ ԿԵԱՆՔԻՑ

Ա.

1864 թուականի ամառն էր: Թէոդոսիոյ խալիպեան դըպրոցից ես նոր էի վերադարձել իմ հայրենիքը,— Ախալցխա: Հայրենակիցներն մեծագոյն մասը, մանաւանդ հարուստ դասակարգը, սաստիկ դժգոհ էր առաջնորդական փոխանորդ Գրիգոր եպիսկոպոս Սաքինեանցից: Կային ի հարկէ, և ջատագոյններ. բայց սակաւ փոխանորդի հակառակորդները, ի միջի ալլոց, ասում էին, որ նա, իւր լուրը Մատթէոս կաթողիկոսի վրայ դրած և ուղղակի նրա հետ լարաբերութիւն ունենալով միշտ, բացարձակ արհամարհում է ամէնքին, նոյն իսկ իւր սնընդմիջական իշխանաւորին, որ էր Վրաստանի և Իմերեթի Հալոց Առաջնորդ Մակար եպիսկոպոսը:

Հակառակորդների ուրախութեանը չափ չկար, երբ լանկարծ ձայն ընկաւ թէ թեմակալ Առաջնորդը՝ Տփլիսից մեկնել է լալցելութիւն իւր հօտին և թէ՛ օգոստոսի սկզբներին Ախալցխա կը լինի:

Քաղաքից 9 վերստ հեռու, տաճկաբնակ մի գիւղ կայ, անունը Մնիս, որտեղ, սովորաբար, Ախալցխացիք դիմաւորում են Տփլիսից եկող իբանց պատուաւոր հիւրերին: Գիւղի արևելեան կողմում՝ ընդարձակ պարտէզներ կան՝ բազմատեսակ պտղատու ծառերով: Թեմակալ Առաջնորդին Ախալցխա ժամանելու օրը՝ աղբ պարտէզներից մէկում՝ նախաճաշի ճոխ սեղան էր սարքուած: Գիւղն ու պարտէզները՝ ամբողջովին վիտում էին Ախալցխալից եկած հոծ բազմութեամբ: Աչքի էին ընկնում մանաւանդ հարուստ դասակարգը՝ Դրանց թուամբ էր և իմ բարերարը, Կարապետ աղա Մութաֆեանց, որի հետ

ևս էլ եկած էի Գրիգոր եպիսկոպոսը չկար Ասում էին, որ նա հիւանդ է ձեացել: Որոշեալ ժամին Առաջնորդը հասաւ Մնիս:—Փառաւոր ընդունելութիւն եղաւ: Հառեր խօսուեցան: Սրբազան հիւրը՝ խրան կենաց առաջարկուած բաժակը ընդունելով՝ իւր հերթում բաժակ առաջարկեց Սազինեանցի և Ախալցխայի ժողովրդեան կենացը միասին, իբրև հօր և զաւակներին: Գրիգոր եպիսկոպոսի անուան լիպատակութիւնը, այն ևս՝ ալդ ձեռով՝ ներկայ եղողներին վրայ վատ ազդեց: Մի ծառի տակ, և բոլոր ժամանակը լուռ ու մունջ կանգնած, ես ալ բանը պարզ կերպով նկատեցի: Չաթալբաշեան Բակոբ աղան, որ հարուստ դասակարգի առաջնակարգ անդամներէց մէկն է և հմուտ զրաբառագէտ, լատենց թէ՛ Գրիգոր եպիսկոպոսը հիւանդ լինելով՝ նրա խնդրանք հասարակութիւնը սրբազան Առաջնորդի համար՝ առանձին իջեան է պատրաստել: Աստուած առողջութիւն պարգևեցէ, ասաց Մակար եպիսկոպոսը ժպտախառն ձայնով ու աւելացրեց. Բակոբ աղա, Ախալցխայի լաջորդար՝ նը կարծեմ չորս սենեակ ունի: Նրկու կուսակցոն անձինք դիւրութեամբ կարող ենք տեղաւորուել: Նւ որովհետեւ, —ինչպէս ասում էք, — Գրիգոր սրբազանը հիւանդ է, ուստի ես պարտաւոր եմ նրա մօտ իջեանել: Ուստի խընդրում եմ կարգադրէք, որ եկեղեցուց ես ուղղակի լաջորդարան դնամ:

Մակար եպիսկոպոսին ես առաջին անգամ տեսալ ալդ օրը: Նւ թէպէտ մարդկանց և նրանց հաշիւներին ու միտում. ներին միանգամայն անտեղեակ մի պատանի էի ես ալդ ժամանակ, — ալ ու ամենայնիւ հասկացալ որ ժողովրդականք մի ինչ որ խաղ են ուղում խաղալ իրանց Առաջնորդի գլխին, — ուղում են նրան իրանց ձեռքը ձգել, բայց նա չէ ուղում խաղալիք դառնալ:

Նստեցանք կառքերը և կէս ժամից լետով՝ արդէն Ախալցխայումն էինք:

* *

Եկեղեցական Թափորով, որին ներկայ չէր փոխանորդը, Առաջնորդը եկեղեցի մտաւ և այնտեղից լաջորդարան. — Ես էլ ներս սլքուեցալ, փոխանորդը առանձնացած էր իւր ննջարանում և, —ինչպէս ասում էին, — անկողնի էր ծառայում: Մի քանի րոպէ՝ ոտքի վրայ եղած խօսակցութիւնից լետով՝

ժողովրդականք հեռացան: Եկեղեցու դաւթում լաջորդի հաս-
ցիլին շատ աննպաստ խօսքեր և առակներ խօսուեցան ժողո-
վրդականաց մէջ: Ասում էին նախ որ նրա ալս անգամուա-
վարմունքը իրան վրալ շատ սուղ կը նստի, որ Առաջնորդը՝
իւր ստորագրելոյ կողմից՝ իրան հասած ալս աստիճանի հրա-
պարակական նախատինքը ալ ևս կարող չէ տանել և ալլն:
Մարդիկ էլ եղան, որոնք սկսեցին Մակար եպիսկոպոսին ևս
դատապարտել թէ՛ թուլ է, հակաժողովրդական է, անձնասի-
րութիւն, պատուասիրութիւն չունի: Ոմանք էլ թէ՛ խորա-
մանկ է, խալթող օձ է, Վիսփուկ փուշ՝ է, քարը բամբակի
մէջ է՝ դնում և արնայէս ձգում և ալլն և ալլն:—Ոմանք էլ
սկսեցին Մատթէոս կաթուղիկոսին մեղադրել, թէ Սագինեան-
ցին շատ երես է տուել, թէ՛ ամէն կարգ ու կահունի խան-
դարման պատճառ է դարձել, թէ՛ Սագինեանցը նրան կաշա-
ռում է նոյն իսկ գուրբաներ ընծալ ուղարկելով:

Աւերջ ի վերջոյ՝ մարդիկ ցրուեցան, որոշելով որ Կարա-
պետ աղա Մութաֆեանցը հետեալ օրը Առաջնորդին հաշի-
հրաւիրէ իւր տանը:

* *

Նոյն օրը, երեկոյեան, Կարապետ աղան ինձ էլ հետը
վերցնելով, դնացինք լաջորդարան:

—Ո՞վ է ալս պատանին, լօնքերը կիտելով հարցրեց
Մակար եպիսկոպոսը:—Ես պատմեցի իմ ով լինելը:—Ահու-
հետե Մակար եպիսկոպոսը մանրամասն տեղեկութիւն հարց-
րեց ինձանից խալիպեան դպրոցի, նրանում աւանդուած ա-
ռարկաների ու լեզուների և ուսուցիչների մասին: Եւ դառնալով
դէպի Մութաֆեանը՝ գովեց Գաբրիէլ վարդապետ Ավագիա-
նին, նրա բացարած ֆարիզի Հակադեան և Թէոդոսիոյ խալի-
պեան դպրոցները, նրա ուսումնականութիւնը և նրա լեզուա-
գիտութիւնը:—Օրհնեց Մութաֆեանցին, որ ինձ խալիպեան
դպրոցն է ուղարկել և ապա՝ դառնալով դէպի ինձ հարցրեց՝
Վճեր տեսչի (Խորէն վարդապետ Գալֆալեանի) դէմ ապրս-
տամբողների մէջ դու չկալի՞ս:—Ես չիոթուեցալ:

—Ճշմարիտ է, որ կամեցել էք ձեր տեսչին քարկոծել:
Ես լուռ էի: Եւ պատկառում էի նա մանաւանդ իմ բարերար
Մութաֆեանից, որ խալիպեան դպրոցում տեղի ունեցած
խաղտառակ անցքից և իմ ունեցած մասնակցութիւնից տեղե-

կութիւն չունէր.—Իսկ թէ Մակար եպիսկոպոսը որ տեղից էր լսել ալդ անցքը, որի մանրամասնութիւնը ինձանից լաւ էր իմանում, մինչ օրս ինձ համար գաղտնիք է մնացել:

Վերջի վերջո՛ւ Մութաֆեանցը սրբազանին ճաշի հրաւիրեց հետեւել օրուայ համար.—Նա լանձն առաւ: Էրակ Գրիգոր սրբազանին չէք խնդրել,—վրայ բերեց Մակար եպիսկոպոսը: Ուրախութեամբ կը հրաւիրէի, պատասխանեց Մութաֆեանցը, բաց Գրիգոր սրբազանը հիւանդ է:—Ծանր հիւանդ չէ. ես նորան տեսաւ, մի քանի օր առաջ Գլուխ Ժողովոյ է եղել: Այժմ լաւ է, կարող է ճաշին գալ, եթէ հրաւիրէք:

Ինձ քաջ լալտնի էր, որ Մութաֆեանցի համար շատ ծանր էր Սագինեան եպիսկոպոսին ճաշի հրաւիրել, ալն ես մի ախպիսի ճաշի, որ պէտք է ունենար Մութաֆեանցի իրան տանը և ուր Սագինեանցի հակառակորդները պիտի լինէին բացառապէս: Ուստի և Մութաֆեանցը լալտնեց որ ինքը պարտաւոր է Գրիգոր սրբազանին ևս հրաւիրել, սակայն... —Կարապետ աղա,—Մութաֆեանցի խօսքը ընդհատեց Առաջնորդը,—չէ որ ես սրբազանի հիւրն եմ: Եւ հիւրի համար անքաղաքավարութիւն է ճաշի գնալ առանց տանուտիրոջ:—Մութաֆեանցը լաղթուած էր: Բոլորովին ակամայից սա մտաւ Գրիգոր լաջորդի առանձնատենակը և քիչ լետով դուրս գալով լալտնեց, որ Սագինեանցը հրաժարուած էր ճաշի գալ:

—Բարի. եթէ նա ևս չկարողացաւ գալ՝ միմիայն ինքս կուգամ, ասաց Մակար եպիսկոպոսը: Մենք դուրս ելանք:

* *

Հետեւել օրը Մութաֆեանցի տանը մեծ բազմութիւն կար ճաշին: Հոգեւորականներից ներկայ էին միմիայն Մակար եպիսկոպոսը և մայր եկեղեցւոյ առաջ երեցը:—ձաշը շատ լուրջ կերպով անցկացաւ: Յաջորդի կամ նրա վարմանց մասին ոչ մի խօսք, ոչ մի ակնարկ չեղաւ:—Ամէնքն էլ ակնածում, պատկառում էին սրբազան Առաջնորդից:

Չորս օրից լետով Մակար սրբազանը ճանապարհ ընկաւ դէպի Ախալքալախ:—Խուռն բազմութիւն հաւաքուած էր եկեղեցւոյ գաւիթը:—Բազմաթիւ ձիաւոր երիտասարդներ և կառքեր շրջապատած էին նրա կառքը: Փաղաքի իշխաններով և ասնաֆապետներով շրջապատուած՝ սրբազանը լաջորդարանից դուրս եկաւ, մտաւ եկեղեցի, գաւթում վիտացող հոծ

բաղմուծեանը խաչակիցքեց և կառք նստաւ: Սաղինեանցը դարձեալ չկար, իսպառ չէր երևում:

Կառքերն ու ձիերը սլացան: Քաղաքից 5 վերստ հեռու՝ Մինազա կոչուած գիւղի միջով անցնում էր Կուր գետը, որի կամրջին դեռ նոր էր հասել բաղմուծիւնը՝ երբ ժողովրդեան մէջ մի աղաղակ փրթաւ լանկարծ «Սաղինեանը գալիս է»:— Առաջնորդի կառքը կանգ առաւ:—Ամէնքի աչքերը դէպի լեռ ուղղուեցան: Եւ ինչ ենք տեսնում: Վարդան աղա Վարդանեանցը,—Գրիգոր եպիսկոպոսի միակ բարեկամ ու պաշտպան իշխանը Ախալցխալում,—եպիսկոպոսի հետ մի կառքում նըստած՝ սրնթաց արշաւում են:—Քրքիչ, քրթմնջիւն, հեգնուծիւններ սկսուեցան ժողովրդեան մէջ:

Մակար եպիսկոպոսը նրան հետեւելով և շատերը, հէնց այն է, որ կառքերից վալը էին իջնում և՛ ահա Սաղինեանցը վեղարը հանած՝ և Առաջնորդի առաջ չոքած՝ ասում է՝ «հալը, մեղակ լերկինս և առաջի քո»:

—Վեր կաց, Պօղէ, խիստ է քեզ ընդդէմ խթանի աքացելը:—Այս եղաւ Առաջնորդի պատասխանը: Ժողովուրդը մէկ զմէկ հրում, հրմշտկում էր: Ես լեռ մղուեցալ: Եւ էլ չլսեցի՝ այն խօսակցութիւնը, որ 10 րոպէի չափ տեղի ունեցաւ Մակար եպիսկոպոսի և նրան շրջապատող վեղարաբաց Գրիգոր եպիսկոպոսի և զխաբաց իշխանների մէջ:

Այս միաշն հաստատ գիտեմ, որ այդ խօսակցութիւնը այն հետեանքն ունեցաւ, որ Սաղինեանը և իրեն հակառակորդները միմեանց հետ հաշտուեցան: Գոնէ արտեղի ու անտեղի խօսք ու զրոյցներն, որ, ինչպէս ասում էին,—երկար ժամանակից ի վեր խօսում էին լաջորդի և ժողովրդեան մասին, աշնուհետեւ իսպառ դադրեցան:

Բ.

1867 թուականին Գէորգ Գ. կաթողիկոսը մեծաշուք հանդիսով մուտք գործեց Տփլիս, ուր ես Մութաֆեանցի առևտրական գրասենեկի կառավարիչն էի այդ ժամանակ: Կաթողիկոսի շքախմբի մէջն էր նաև Խորէն վարդ. Գալֆայեանը: Վեհ. Հայրապետի Պետերբուրգից վերադառնալիս՝ նորա հետ եկաւ նաև Գաբրիէլ վ. Ալվազեանը: Այդ ժամա-

Նաև Տփլիսումը խալիպեան դպրոցի ստներին 14 հոգի կա-
լինք։ Լսելով Գաբրիէլ վարդապետի դալը՝ մենք ժողովու-
ցանք և հետեալ օրը ակցելութեան զնացինք մեր նախկին
վերատեսչին, որ Առաջնորդարանի ներքին լարկումն էր ապ-
րում։

* *

Մօտ մի ժամ տեսց մեր և մեր սիրելի վերատեսչի տե-
սակցութիւնը։ Ալվազեանը շատ հետաքրքրուով էր մեզանից
իւրաքանչիւրի ներկալ վիճակով։ Եւ շատ ուրախանում ու
մխիթարում էր մեզնից ստացած տեղեկութիւններով։ Յետոյ
նա մեզ պատմեց ալն փոփոխութիւնները, որ կատարուած
էին խալիպեան դպրոցում և որ, վերջ ի վերջոյ, փակուած էր։

Նախ քան հրաժեշտ տալը՝ մենք լալտնեցինք նրան,
որ ցանկանում ենք վեհափառ կաթողիկոսի աջն առնել և
խնդրեցինք, որ նա ինքը մեզ առաջնորդէ։

— Մեծաւ սիրով, պատասխանեց հալը սուրբը և, փոքր
ինչ միտք անելով և, կարծես, մի գիւտ արած լինելով՝ ու-
րախ դէմքով վրալ բերեց. «Այն ատեն աղէկ չէր լինիլ,
ողալք, եթէ որ ձեր կողմէն խնդիր մըն ալ գրէիք և վեհա-
փառին խնդրէիք, որ խալիպեան դպրոցը նորէն բանալու
տնօրէնութիւն մը ընէր»։

Մենք համաձայնեցանք։ Խնդիրը պատրաստեցինք, նա-
խապէս իրան ցոյց տուինք, և մի քանի օրից լետով՝ Գէորգ
Դ. կաթողիկոսին ներկայանալով խնդիրը կարդացինք։ Նո-
րին վեհափառութիւնը բարեհաճեց լալտնել, որ ինքն ևս
համակիր է մեր ցանկութեան և խալիպեան դպրոցի վերստին
բացումը՝ նրա գլխաւոր հոգսերից մէկն է լինելու։

Ուրախ տրամադրութեամբ վեհարանից ցած եկանք Գաբ-
րիէլ հալը սուրբի սենեակը։— Այդտեղ նա մեզ առաջարկեց,
որ եթէ նիւթական միջոցներս կը ներեն՝ վեհափառին մի
ճաշ տանք։ Եւ ճաշը տրուի մի պարտիզի մէջ, որ, առ հա-
սարակ, վեհափառը շատ է սիրում։— Մեծ սիրով և պարծա-
նով ընդունեցինք մենք ալը առաջարկը և հետեալ օրը մեր
մէջ հարկաւոր դրամը հանգանակելով՝ երեկոյեան եկանք
լալտնեցինք, որ փողն արդէն պատրաստ է։ Մնում է վեհա-
փառի հաճութիւնը ստանալ և ճաշի օրը որոշել։ Իսկ ճաշե-
լու տեղ՝ որոշել էինք Մուշտալիդի պարտէզը։

Գաբրիէլ հալը սուրբի ուրախութեանը շափ չկար։—Նրա խորհրդով՝ մեղանից երիք հոգի բարձրացանք իսկոյն վեհա-
րան՝ կաթողիկոսին և իւր շքախմբի անդամներին խնդրելու։

• •

Դահլիճում մեղ պատանեց Մակար եպիսկոպոսը։

Աջը առանք, լալտնեցինք թէ ինչու համար ենք ուղում
կաթողիկոսին ներկայանալ։

—Ճաշ տուողներդ քանի հոգի էք, հարցրեց մեղ Մա-
կար եպիսկոպոսը։

—14 հոգի, պատասխանեցինք մենք։

—Ամէնքդ էլ Խալիպեան դպրոցի սաներն էք։

—Այո։

—Ի՞նչ պաշտօններ էք վարում։—Մի առ մի պատմե-
ցինք։

—Ամուսնացած էք։

—Ոչ։

—Ամէնքդ էլ ամուրի էք, հարցրեց նորից Մակար ե-
պիսկոպոսը իւր ձայնի մէջ զգալի դժգոհութիւն արտապատե-
լով։

—Այո, ամէնքս էլ ամուրի ենք, դժգոհութեամբ պա-
տասխանեցինք։

—Գաբրիէլ հալը սուրբի հետ ալդ մասին՝ նախապէս
խորհրդակցեցէք։

—Ո՛չ, պատասխանեցինք մենք։

—Ուրեմն գնացէք դեռ առաջ Գաբրիէլ հալը սուրբի
կամքն ստացէք։

Մենք վարանում էինք։ Մակար եպիսկոպոսի թէ առա-
ջուան հարցմունքները և թէ վերջին խօսքերը մեղ վրայ շատ
վատ ազդեցին։

—Գնացէք, որդիք, գնացէք Գաբրիէլ հալը սուրբի հետ
խորհրդակցեցէք, —կրկնեց Մակար եպիսկոպոսը և շուռ եկաւ՝
մտաւ իւր սենեակը։

Վիրաւորուած ու զալրացած՝ իջանք և Գաբրիէլ հալը
սուրբին լալտնեցինք ամէն ինչ։—Նա շատ տխրեց։ Եւ Մա-
կար եպիսկոպոսի վարմունքը նրա նախանձոտութեանը ար-
գասիք համարեց։—Ի վերջոյ պատուիրեց, որ Մակար եպիս-

կոպոսին թախանձենք, որ ինքը ևս անպատճառ ներկալ լինի ճաշին:

Նորից բարձրացանք. և նորից Մակար եպիսկոպոսին հանդիպելով՝ լալտենցինք, որ Գաբրիէլ հալը սուրբը ընդդէմ չէ մեր ցանկութեանը:

Բոպէական լուսթիւնից լեռով՝ Մակար եպիսկոպոսը հրամայեց շաթիրին՝ մեր գալուստը զեկուցանել Վեհափառին:— Շաթիրը վերադարձաւ և մեզ հրաւիրեց ներս:

Կաթուղիկոսը առանց ալլևալլութեան և առանց որ և է հարց ու փորձի, մեր հրաւերը ընդունեց իսկոյն, մեր ընտրած պարտէզին հաւանութիւն տուեց և ճաշի օրը որոշեց չորրորդ օրը:— Յաղթանակ տարածների նման մենք վեհարանից դուրս եկանք. մի առ մի մտանք շքախմբի անդամներից իւրաքանչիւրի սենեակը և խնդրեցինք. Ամէնքն էլ ուրախացան, նա մանաւանդ Պետրոս եպիսկոպոսը, որ մեզ խորհուրդ տուեց՝ ճաշի սեղանը պարտիզի կանաչոտ տեղում սարքել:— Ճաշ պատրաստելն էլ՝ Յովհաննէս աղա Մամիկոնեանցին լանձնել, որի հասցէն ևս Պետրոս եպիսկոպոսը մեզ տուեց. «Իմ կողմանէ Յովհաննէս աղային աս ալ կըսէք, որ փորը լցած դառ մըն ալ պատրաստէ»:— Մեծ սիրով, մեծ սիրով, ասացինք մենք և մտանք Մակար եպիսկոպոսի սենեակը, որ նրան էլ խնդրենք:

— Յօժարութիւն տուեց Վեհափառը՝ հարցրեց նա ժանգռոտ ձայնով:

— Այո՛, — ասացինք մենք և ուղում էինք սենեակից դուրս ելնել, բայց նա վրալ բերեց:

— Բայ ի Խալիպեան ղպրոցի սաներից հօ ուրիշ մարդիկ չպիտի լինին:

— Ոչ:

— Ձեզանից որի տանը պէտք է լինի ճաշը:

— Տան մէջ չպիտի լինի, ալլ բացօթեալ, պարտիզում:

— Պարտիզում: Եւ սրբազանի երեսը թթուեց:

— Այո՛, պարտիզում:

— Ո՞ւմ պարտիզում:

— Մուշտալիզում:

— Ի՞նչ, — պոռաց Մակար եպիսկոպոսը և ժանգռոտուեց:

— Մուշտալիզի պարտիզում, Վեհափառը արդէն իւր լօ-

ժարութիւնը տուել է: Պետրոս սրբազանը ևս... մենք սկսեցինք տաքանալ:

—Յակոբ, մեր խօսքն ընդհատելով՝ սրբազանը իւր ծառային ձայն տուեց: Մենք մի րոպէ կարծեցինք, որ Մակար եպիսկոպոսը ծառային կանչում է մեզ իւր սենեակից դուրս վռնդելու, որովհետեւ, լիրաւի, մենք արդէն սկսել էինք կուպիտ ձև տալ մեր խօսքերին ու շարժումներին: Եւ արն աստիճան լուզուած էինք, որ, թերեւ, դիմադրէինք էլ, եթէ սըրբազանը իւր ծառային ալիսի հրաման տար:—Յակոբ,— դարձաւ սրբազանը ներս մտնող ծառային,— երեցփոխանին կանչիր:—Մառան դուքս գնաց: Մեր կասկածն աւելացաւ: Բարեբաղդաբար շուտով էլ փարատուեցաւ, երբ Մակար սըրբազանը դարձաւ դէպի մեզ, ասելով՝ «Վեհափառը այս քաղաքին և սրա պարտէզներին անձանթ գոլով՝ լստարացել է Մուշտալիդի պարտիզում ճաշել: Սակայն դուք ինչու չէք խորհել, որ ամենայն Հայոց կաթողիկոսին Մուշտալիդ տանել և արնտեղի ժխորի մէջ ճաշ տալն՝ անպատուութիւն կը լինի թէ՛ Նորին սրբութեան համար և թէ՛ ազգին համար, որոյ անդամները դուք ևս էք: Այդպէս է թէ ոչ:—Ընդուն՞մ էք իմ կարծիքը:—Մենք չգիտէինք ինչ պատասխան տանք: Եւ սկսեցինք միմեանց երեսին մտիկ տալ:

—Բաց ի դրանից,— շարունակեց Մակար սրբազանը,— Մուշտալիդի մէջ՝ մարդկանց և կառքերի անդադար երթևեկութիւնը Վեհափառին անհանգստութիւն կը պատճառեն: Ուստի ես անա երեցփոխանին կանչեցի և կը պատուիրեմ, որ նա ինքը մի լարմարաւոր պարտէզ գտնի:—Համաձայն էք իմ և երեցփոխանի ընտրութեան: Մեր ընտրած պարտիզի համար ձեզանից վարձ էլ չի պահանջուիլ:—Գնացէք դանլիճը, ձեզ ու ձեզ խորհեցէք և եկէք ձեր որոշումը ինձ լալտնէք:

Դուրս ելանք. մտանք Գաբրիէլ հալսուրբի մօտ:—Նա նորից տխրեց և նորից նախանձի և ատելութեան վերադրեց Մակար եպիսկոպոսի արարմունքը: Խօսակցութիւնից պարզուեցաւ, որ Գաբրիէլ վարդապետի ցանկութիւնն արն է եղել, որ Տփլիսի հասարակութիւնը իմանալ, որ մենք,—իւր նախկին աշակերտներս,— ամենայն Հայոց կաթողիկոսին ճաշ ենք տուել: Մի և նոյն փառասիրութեամբ մենք-աշակերտներ ևս՝ վարակուած էինք: Մինչդեռ Մակար եպիսկոպոսի բռնած դիր-

քով մեր նպատակին չէինք հասնիլ:—Մեր փառասիրութիւնը լա-
գուրդ չէր ստանում: Այսպէս էինք դատում ալն ժամանակ մենք,
14 անփորձ պատանիներս: Այսպէս էր դատում և մեր սիրելի ու
լուսաւորի Գաբրիէլ հայր սուրբը: Վերջի վերջոյ մտածելով որ եթէ
Մակար եպիսկոպոսի խորհուրդը մերժենք, կարող է պատահել,
որ մեր ճաշը բոլորովին խափանել տալ, վասն զի,—այսպէս
էր ասում Գաբրիէլ հայր սուրբը,—ւանիկալ կամակոր և լա-
մառ մարդ մըն է, ուստի պատգամաւորներս նորից բարձ-
րացանք և լալտնեցինք Մակար եպիսկոպոսին, որ իւր խոր-
հուրդը ընդունում ենք:

—Շնորհակալ եմ, որ վստահացաք ինձ վրայ, ասաց նա:

—Սրբազան, վեհափառի կառքին չո՞րս ձի լծել տանք
թէ վեց, հարցրեց մեզանից մէկը:

Այդ մասին լեռով կը խորհենք,—պատասխանեց Առաջ-
նորդը:

—Բայց մեզ անհրաժեշտ է արժանանից՝ ալը բանն իմա-
նալ, որպէս զի ըստ ալնմ կառապանին պատուէր տանք ձի-
անք պատրաստելու:

—Տակաւին ժամանակ շատ կալ: Յետոյ կը որոշենք:

Դուրս եկանք: Եւ կառքի ձիերի պատմութիւնը ևս
հաղորդեցինք Ալվադեանին, որ իւր կողմից որոշեց, որ ձիե-
րի թիւը 4 լինի և թէ՛ աւելորդ է ալդ մասին ալ ևս Մա-
կար եպիսկոպոսի խորհրդին դիմելը:

Հետեւեալ օրը Մակար եպիսկոպոսի կողմից մի մարդ մեզ
տարաւ և ընտրուած պարտէզը ցոյց տուեց: Նա գտնուում էր
քաղաքից բոլորովին դուրսը, Վերալի ¹⁾ կողմը: Չձմարիտ է՝
պարտէզը շատ գեղեցիկ էր, ծառազարդ, ծաղկաւետ, դալարա-
գեղ, բայց բոլորովին առանձնակի: Չանապարհներից և եր-
թեկեկութիւնից իսպառ կտրուած:

Չորս չունէինք, թիւ կարող էինք անել: Այդ տեղ էլ
պատրաստել տուինք մեր ճաշը:

Որոշեալ օրին և ժամին վաճառի գաւիթը մտան Վեհա-
փառի քառաձի և միւս հասարակ կառքերը:

Մտանք Գաբրիէլ հայր սուրբի և միւս եպիսկոպոսների
և վարդապետների սենեակները: Ամէնքն էլ կազմ և պատ-

¹⁾ Եկեղեցական ալդին է դա:

րաստ էին և սպասում էին կաթողիկոսի դուրս գալուն Մակար եպիսկոպոսի հետ:—Մտանք դանլիճը, Շաթիրը մտաւ Վեհափառի սենեակը՝ իմաց տալու Մի քանի բողոքից լեռոյ՝ նոյն սենեակից դուրս եկաւ Մակար եպիսկոպոսը միայնակ, վեղարը գլխին և դաւադանը ձեռին և դառնալով դէպի մեզ ասաց՝ Վեհափառը տկար է, չէ կարող գալ ճաշին:—Ինձ պատուիրեց, որ իւր հայրական օրհնութիւնն ու գոհունակութիւնը ձեզ լստնեմ: Ձեզ հետ ճաշին կը լինինք ես և միւս սրբազաններն ու վարդապետները: Գնանք, հրամեցէք, — ասաց և քալիւր դէպի դուրս ուղղեց:

Մենք ալլալուեցանք, լուզուեցանք:

—Յակոբ,— ձայն տուեց եպիսկոպոսը իւր ծառալին,— երեցփոխանին ասան Վեհափառի կառքը ճանապարհ գծէ: Եւ իջաւ ներքեւ, գաւիթը, ուր արդէն հաւաքուած էին մեր հիւրերը: Յուսախմբ, գլխակնր, սրդողած մենք էլ վալլիջանք սանդուղներից և ուզում էինք Գաբրիէլ հալը սուրբի հետ առանձին խօսել, բայց նա արդէն Մակար եպիսկոպոսի հետ կառք էր նստել և միմեանց հետ խօսում էին:—Գոխիցք երեսում էր, որ Գաբրիէլ հալը սուրբը ես՝ սրդողած էր:—Երեցփոխանը Վեհափառի կառքը լեռ դարձրեց: Ամէնքը նստեցան իրենց կառքերը և գնացինք:

* *

Ճաշի վրայ առաջին բաժակը առաջարկեց Գաբրիէլ հալը սուրբը լանուն կաթողիկոսին: Ամէնքս ոտքի ելանք և Տէր կեցո՛ դու զհայտ երգեցինք: Վեհափառի կողմից շնորհակալութիւն լստնեց Մակար եպիսկոպոսը, և իւր կողմից բաժակ առաջարկելով ի պատիւ Գաբրիէլ վարդապետ Ալվազեանին՝ մի շատ գեղեցիկ ճառ խօսեցաւ:—Ճառը ամենալաւ տրպաւորութիւն գործեց ամէնքիս վրայ: Գաբրիէլ հալը սուրբը այն աստիճան զգածուեցաւ, որ համբուրեց Մակար եպիսկոպոսին: Եւ սա նրան, Մենք, աշակերտներս, նոյնպէս զգածուեցանք և մի լաւ համբուրեցինք թէ Գաբրիէլ հալը սուրբի և թէ Մակար սրբազանի աջերը:

Հաշտութիւնը կատարեալ էր: Գաբրիէլ վարդապետն էլ, մենք, աշակերտներս էլ, մոռացանք ամէն ինչ:—Մակար եպիսկոպոսը, իւր ճառով, կարծես մագնիսացրեց մեզ:

Այդ բողոքում լանկարծ մտքումս պատկերացաւ նոյն

Մակար եպիսկոպոսը, դրանից երկու տարի առաջ, Ախալցը-
խայի մօտ՝ Մինազա գիւղի կամրջի մօտ, շրջապատուած Գրի-
գոր եպիսկոպոս Սաղինեանցով և Ախալցխայի իշխաններով,
խօսում էր մի քանի րոպէ։— Այն ժամանակ նա իւր խօսքե-
րով Ախալցխայի իւր փոխանորդին հաշտեցրեց տեղւոյն իշ-
խանների հետ։ Այժմ իւր ճառով՝ Գաբրիէլ վարդապետին և
մեզ հաշտեցրեց իրան հետ, իրան՝ որ մեզ թշնամի էինք
կարծում։

* *

Հետզհետէ մեր ճաշը ընտանեկան կերպարանք ստացաւ։
Առատութեամբ շամպայն խմեցինք։ Ամէնքս էլ ճառում էինք,
երգում էինք։ Առաջին անգամ մի նոր երգ էլ լսեցինք.—
«Ակուռիին մեծ կարասին», որ Պետրոս եպիսկոպոսը երգեց։
Սակայն դեռ ճաշը չվերջացած՝ տեսանք որ Մակար եպիսկո-
պոսը չկալ։— Ասում էին, որ ծառի տակ քնած է։ Ուզում
էինք գտնել արթնացնել, սակայն Ալվաղեանը լալանեց, որ
Մակար սրբազանը գնացել է իրանից թուլտուութիւն ստա-
ցած գոլով։

Մի ժամից լիտով կառքերն եկան և մենք վերադարձանք։
Հենց ալն է, որ մենք վանքի գաւիթը մտանք և անա ժամը
դուրս էր եկել և Մակար եպիսկոպոսը մի քահանայ առաջը
ձգած՝ առաջնորդարան էր գնում։ Օրը շաբաթ էր և ժամա-
ւորների մեծ բազմութիւն կար։— Մենք շատ ուրախացանք,
որովհետեւ ժողովուրդը տեսաւ, որ մենք, խալիպեան դպրոցի
աշակերտներս, ամենայն հալոց կաթուղիկոսին ճաշ ենք
տուել, թէպէտ և կաթուղիկոսը ճաշին ներկայ չէ եղել տկա-
րութեան պատճառաւ, իբր թէ...։— Հենց ալն էր, որ Գաբ-
րիէլ հալր սուրբին միւր հրաժեշտը տալով՝ աշակերտներս
դուրս էինք գալիս և անա Մակար եպիսկոպոսը, իւր ծառայի
միջոցաւ, մեզ վերև է կանչում։— Բարձրացանք, ձաշարանը
տարան մեզ։ Առաջնորդը նստեց և մեզ ևս հրաւիրեց նստելու
իւր շուրջը։ Մօռան չալ բերեց։ Խմեցինք, խօսեցինք։ Յետոյ
Մակար սրբազանը կաթուղիկոսի կողմից մեզ օրհնեց, շնոր-
հակալութիւն արաւ և իւրաքանչիւրիս մի մի աւետարան ըն-
ծալեց նորին սրբութեան անունով։ Մենք էլ, Գաբրիէլ հալր
սուրբն էլ, ի հարկէ, հասկացանք, որ վեափառ կաթուղիկո-
սի տկար լինելը Մակար եպիսկոպոսի սարքած բանն էր։ Եւ

թէպէտ սկզբում վշտացանք, զարացանք նրանից, սակայն, վերջ ի վերջոյ, այն եզրակացութեան եկանք, որ մեր կողմից, իրաւի, միանգամայն երեխայութիւն էր (եթէ ոչ լանդշդնութիւն) ամենայն հալոց կաթուղիկոսին ճաշի հրաւիրել այն էլ Մուշտալիզի պարտէզում: Համոզուեցանք, որ Մակար եպիսկոպոսի վարմունքը ոչ նախանձ էր, ոչ ատելութիւն. թէ՛ այդ մարդը ոչ կամակոր է և ոչ էլ լամառ, այլ վերին աստիճանի կարգապահ, եկեղեցւոյ Պետի անուան և պատուոյն նախանձախնդիր. մի և նոյն ժամանակ այնքան խոհեմ և աակտով, որ թէ Գաբրիէլ հալո սուրբի ցանկութիւնը կատարեց և թէ մեզ, պատանիներիս, սիրտը չ'կոտրեց,—սիրաշահեց:

* *

1881 թուականին ես, որպէս Ախալցխայի քաղաքագլուխ, Էջմիածին գնացի եկեղեցական-հասարակական մի գործով: Մակար եպիսկոպոսը այդ ժամանակ Բեսարաբիոյ թեմի առաջնորդ էր: Իսկ Գրիգոր եպիսկոպոս Սագինեանցը՝ Ախալցխայում լաջորդ էր դարձեալ:—Վրաստանի և Իմերեթի թեմակալ առաջնորդն էլ Գաբրիէլ եպիսկոպոս Ալվազեանն էր: Մի անգամ առիթ եղաւ և ես Վեհափառ կաթուղիկոսին պատմեցի 1867 թուականում ի պատիւ իրան մեր տուած ճաշի այս պատմութիւնը: Դէորդ Դ. մտաբերեց և լալտեց, որ իրաւի, Մակար եպիսկոպոսն է եղել, որ իրան համոզել է չըզալ մեր ճաշին: «Վահրձմ,—պա զարձաւ Վեհափառ դէպ ի սրբազան Մանկունին,—ըշդէ անկէ աղէկ Տեղակալ շենք կրնար գտնել:—Նախարարին թուղթ մը գրէ, որ զՄակար եպիսկոպոս Տեղակալ կը նշանակեմ կոր:—Յալտնի է, որ ալդպէս էլ եղաւ:

* *

Մակար եպիսկոպոսի տեղակալութեան և կաթուղիկոսութեան ժամանակներիցը՝ ինձ աւելի դէպքեր և իրողութիւններ են լալտնի, *) որոնք վերին աստիճանի բնորոշ են և ցոյց են տալիս, որ 1891 թուականում, անակնկալ կերպով, ի Տէր հանգչող Տէր Մակար առաջին՝ ճանաչուած և գնահատուած չէր իւր ազգից, որոնք ցոյց են տալիս, որ նրա հոգևոր և աշխարհիկ հակառակորդները, որոնց թիւը լէգէօն էր,—իւրանց թէ բանաւոր և թէ գրաւոր մերկացումներով և լարձակումներով զեկավարուել են, ամենամեծ մասամբ, իւրանց

*) Ցանկալի կլինէր, որ արժ. հալրը իւր լիշողութիւնները օր առաջ գրի առնելով, հրատարակութեան տար:

անհասկացողութեամբ, իրանց կարճամտութեամբ, իրանց անձնական կրքերով ու մտտամեքով *):

ԵՂԻՇԷ ԴԱՀ. ԳԵՂԱՄԵԱՆՑ

*) Շատ շատերից անա մի թարմ օրինակ: «Քահանայական խնդրի» հեղինակը՝ Վրաստանի և իմերէթի թեմի առաջնորդութիւնից իւր հրաժարուիլը՝ վերագրում է Մակար կաթողիկոսի «ողօրնի չորհուրդին»: Մակարն սրբազան Արիստակէսը չէ մեղանշում արդեօք ճշմարտութեան դէմ: Ընթերցողը պէտք է գիտենալ, որ Վրաստանի և իմերէթի նախկին առաջնորդ գեր. Արիստակէսը Սինօղի մի քանի հրամանները չէր գործադրում: Սինօղը, և նոյն իսկ Մակար կաթողիկոսը, նկատողութիւն են անում առ ալդ և հրամաններին գործադրութիւնը պատուիրում: Բայց առաջնորդը լամառում է: Սինօղականք զալրանում են և կաթողիկոսին դիմելով՝ խնդրում, թախանձում են օրինական միջոցներ գործ դնել անհնազանդ առաջնորդի դէմ: Կաթողիկոսը որոշում չէ անում, որով և վշտացնում է Սինօղականներին:—Ի վերջոյ 1888 թուականին երբ Նորին Օծութիւնը Տիբիսի է գալիս՝ Կոնսիստորիալին հրամայում է Սինօղին անկատար մնացած հրամանների գործադրման մասին օրագիր կազմել և գործադրել:—Օրագիրը կազմուում է, անդամները ստորագրում են, իսկ Առաջնորդը չէ ստորագրում և իւր հրաժարագիրն է ներկայացնում:—Բուն իրողութիւնը անա այս է: Հարցնում ենք անաչառ անկողմնապահ ընթերցողից այս դէպքում Մակար կաթողիկոսը ողօրնի չորհուրդին է արել արդեօք, թէ Առաջնորդի ողօրնի չորհուրդին, վերջ դնելով՝ նրա հակառակորդ Սինօղականաց լուզուած կրքերը սանձադառել է:—Իսկ եթէ ընթերցողին լալտնի լինին սրբ. Արիստակէսի լիշեալ հրաժարականին հետեող ժողովրդական (և պէտք է ասել արուեստական) խլրտիւնները, լրագրական ինտրիգներն, որոնք Թիֆլիզում սկսուեցան, Բագում (ուր եկած էր Կաթողիկոսը) արժարծուեցան և Գանձակում վերջացա՞ն, —եթէ, ասում եմ ես, ալդ ամէնը հրապարակ դուրս գալ, այն ժամանակ նոյն իսկ Մակար կաթողիկոսի երդուեալ հակառակորդները չեն կարող ուրանալ, որ սրբ. Արիստակէսի պաշտօնից հեռանալու գործում եթէ մի մեղաւոր կալ,—դա բացառապէս ինքը սրբ. Արիստակէսն է:—Այնուամենայնիւ Մակար կաթողիկոսը սրբ. Արիստակէսի և նրա կուսակիցների ինտրիգներին երբէք ոչ դարձնող չէր, երբէք Սեդրակեանի հրաժարագիրը կառավարութեան ներկայացնող չէր, եթէ որ սրբ. Արիստակէսը իմանար, կամ իմանալ կամենար, որ Մակար կաթողիկոսը ոչ ճշման ենթարկուող անձ է, և ոչ էլ, իրրն ամենայն Հայոց կաթողիկոս, մի խեմի առաջնորդի առաջ խոնարհող, նուապացող:

Ման. լօդ.